№ 35 Մարտի 2 (14) 1882 Մարտի 2 (14) № 35

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի *Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Մշակների դրութիւնը Անդրկովկասում։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

—

Դեռ անցեալ տարի մենք առիթ ունեցանք „Մշակի“ միջոցով խօսել մեր երկրում քաղաքի մշակների դրութեան վրա։ Երեսի վրա թողված այդ դասակարգի անտանելի դրութիւնը հարկադրում է մեզ կրկին դառնալ նոյն նիւթին։

Մշակների թիւը, որ առանց այն էլ նշանաւոր է մեր երկրի մեծ կենտրոններում, իւրաքանչիւր տարի քանի մի հարիւրներով էլ աւելանում է։ Նրանք սովորաբար գալիս են Անդրկովկասի այլ և այլ կենտրոններ, ինչպէս Թիֆլիս, Բաքու և այլն, թէ մեր երկրի բոլոր ծայրերից, թէ Թիւրքաց Հայաստանից ու Պարսկաստանից։ Այդ բոլոր մշակները որոնք դուրս են գալիս առողջ երկրագործական հայ ազգաբնակութենից, զետեղվելով մեր մեծ քաղաքներում, բնականաբար ենթարկվում են մեծ քաղաքների կեանքի բոլոր անսաղող պայմաններին։ Այդ թարմ, առոյգ երիտասարդներից իւրաքանչիւրը ճշդնում է յետ դցել իր ստացած օրական չընչին վարձի նշանաւոր մասը, զրկել իր անձը անհրաժեշտ կարիքից, իր բերանի հացը կարել, որպէս զի սև օրվայ համար յետ դցի քանի մի կոպէկ....

Հասկանալի է, ինքն ըստ ինքեան, ինչ կեցութիւն պէտք է ունենան սրանք, որոնցից շատերը, ցերեկվայ տաժանելի աշխատութենից յետոյ, գիշերն անգամ իրանց գլուխը հանգստացնելու տեղ չունեն, այլ մեծ մասամբ փողոցում, անձրևի և ձիւնի տակ են անցնում գիշերը։ Այլ ևս նրանց կերած կերակուրների, նրանց բնակարանների մասին (ով նրանցից ունի բնակարան) մի՛ հարցնէք։ Բանաւոր, մշակ դասը մեր մեծ քաղաքներում վարում է անտանելի, զզուելի կեանք. նա մարդ չէ, իսկապէս, այլ դրաստ։ Բացի այդ բոլոր նիւթական զրկանքներից, մշակը իր երկրագործական, նահապետական պարզ դրութենից անցնելով քաղաքային ապականված շրջանը, ընկնելով իր համար մի նոր, անծանօթ, աւելի զօրաւոր տարրի մէջ, իրացնում է քաղաքային ստորին դասակարգի բոլոր զզուելի թերութիւններ. նա անբարոյականանում է։

Ինչ է լինում սրա հետևանքը։ Հաղարաւոր առոյգ, առողջ շինական երիտասարդներ, բարձի թողի արած իրանց գիւղը, իրանց դաշտերը, վերջապէս իրանց հայրենիքում ամեն նուիրական, սիրելի առարկաները, լի յոյսերով դիմելով դէպի երկրի գլխաւոր կենտրոնները,—այդտեղ հալվում, մաշվում են, նիւթապէս և բարոյապէս փչանում են։ Նրանք այլ ևս պէտք չեն իրանց ընտանիքին, հայրենիքին. նրանք առողջ եկան, բայց վերադառնում են հիւանդ, քայքայված առողջութեամբ. նրանք եկան պարզամիտ, անարատ, նահապետական ոգով, բայց դառնում են իրանց գիւղը շատ տարիներից յետոյ, անբարոյականացրած և կարող են միմիայն անբարոյականացնել իրանց գիւղը, իրանց ընտանիքը։ Ահա քաղաքների, մեծ առևտրական և արդիւնագործական կենտրոնների ազդեցութիւնը նահապետական մշակ դասի վրա։ Դրանից յետոյ մշակը այլ ևս իր հայրենիքին պէտք չէ. քաղաքի անբարոյական կեանքը նրան մաղնիսի պէս ձգում է դէպի ինքն, նա ընտելացել է այդ կեանքին։ Հեռանալ դժուար է և մշակը ստիպված է պարբերաբար գնալ գալ իր գիւղը....

Եթէ ընդունենք ամբողջ Անդրկովկասում գտնված մշակների թիւը մօտաւորապէս 20—25 հազար, որոնք մեծ մասամբ հեռու են ապրում իրանց ընտանիքից, ինքն իրան հասկանալի է թէ իւրաքանչիւր տարի որքան ծնունդներ կորչում են գիւղերում, որքանով է պակասում ամբողջ հայ ազգաբնակութեան թիւը։ Եւ այդ կրկնվում է ամեն տարի։

Արդեօք մեր ազգաբնակութեան համար այդ կենսական խնդրի վրա ո՞վ պէտք է մտածի, եթէ ոչ նոյն իսկ մեր կենտրոնների ազգաբնակութեան հասկացող մասը, ինտելիգէնցիան։

Եթէ մեր ինտելիգէնցիան անընդունակ է մտածել այդ նշանաւոր խնդրի վրա ազգասիրական կամ նոյն իսկ ընդհանուր մարդասիրական տեսակէտից, գոնէ հէնց իրանց «ես»-ի տեսակէտից մտածէին այդ հարցի վրա։ Չէ՞ որ այդ հազարաւոր անապատան և նիւթապէս անապահով ամբոխի միջից, որ օրից օր բարոյապէս փչանում է, կարող են դուրս գալ աւազակներ, գողեր, մարդասպաններ, չէ՞ որ դրանց մէջ վատառողջ կեանքի եղանակի պատճառով կարող են զարգանալ ամեն տեսակ վարակիչ, տարափոխիկ հիւանդութիւններ, որոնք կը տարածվեն քաղաքի միւս ազգաբնակութեան մէջ։ Եւ այնուհետև ստիպված կը լինէք աւելի ջանք և աւելի ծախս գործ դնելու այդ բոլոր չարիքների զարգացման առաջն առնելու համար։

Ժամանակ է մտածել, գոնէ գլխաւոր կենտրոններում եղած մշակների վիճակը փոքր ի շատէ թեթևացնելու վրա, տալով նրանց քիչ թէ շատ մաքուր և յարմար բնակարաններ, հիմնելով արժան ճաշարաններ։ Այնուհետև անհրաժեշտ է կազմել յանձնաժողովներ, որոնք կարողանային Անդրկովկասի մշակների դրութիւնը քննել իմանալ նրանց մեծ քաղաքները դիմելու շարժառիթները, նրանց ցաւերն ու վերքերը և ապա դորա համեմատ դարմանն առաջարկել, որքան հնար է արդելք դնել այն անընդհատ հոսանքին, որ տեղի է ունենում գիւղերից դէպի քաղաքները, աշխատել միջոց հայթայթել քաղաքում զետեղված այդ երկրագործ դասակարգի դեռ ևս առողջ անդամներին վերադառնալ կրկին իրանց գիւղը և կրկին ձեռք տալ արօրին ու բահին....

Իսկ այդ անելը, եթէ մի նոր ընկերութեան գործ չէ, ապա անշուշտ թիֆլիսի բարեգործական և Բաքուի մարդասիրական ընկերութիւնների գործ ու պարտականութիւնն է։ Դրանով այդ ընկերութիւնները մեծ ծառայութիւն արած կը լինեն թէ մեր մշակ դասակարգին և թէ նոյն իսկ Անդրկովկասի ամբողջ հայ ազգաբնակութեանը։

Գոնէ այդ ընկերութիւնները իրագործեն մեր առաջարկած պրոգրամայի մի ամենափոքրիկ մասը։

Եմմանուէլ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Արմաւիր, 20 փետրվարի

Ամենայն հայ, որ ճանաչում է և կամենում է իր ազգի օգուտը, մեծ համակրութեամբ պիտի դիմաւորէ «Մշակի» տասնամեայ տարեդարձը ու շնորհաւորէ նրան, մաղթելով նմա բարեյաջողութիւն ազգային օգտակար գործերում։ «Մշակը» տասը երկար տարիների ընթացքում անխոնջ և արթուն կերպով հսկեց ազգի բարոյական պակասութեանց վրա, զանազան չոկելու աշխատելով, «Մշակն» էր որ ի Թիւրքիա երեք առանձին ընկերութիւնք ի մի մարմին կազմելու պատճառ եղաւ, տաս տարի քաջութեամբ պատերազմեցաւ խաւարի դէմ, առանց վհատելու և վերջապէս յաղթող հանդիսացաւ։ Անթիւ, երկար, խուլ տարիներէն յետոյ «Մշակի» բերանէն առաջին անգամ լսեցինք քարող և յորդոր ի միութիւն և եղբայրութիւն ամեն դաւանութեան հայերի, ձեր լրագրին էր որ աշխատեցաւ լոյս սփռել թէ հոգևորականաց և թէ աշխարհականաց մէջ, ցոյց տալով խոշոր նախապաշարմունքը, տգիտութիւնը, խաւարը, վատութիւնն ու «հաութիւնը»։ Բաւական չը համարելով քաղաքների համար գործելու «Մշակը» մտաւ գիւղերն ու աւանները և այդտեղ զարթեցուց թէ բարոյական և թէ տնտեսական ինքնաճանաչութիւնը։ «Մշակը» յանդիմանեց ընտանեկան սահմանափակ յարաբերութիւնները։ Զենք խօսում թիւրքիայեցի հայոց եղբարց համար նրա բրած աշխատանաց վրա, նրանց տուած նիւթական օգնութեան վրա. նրա ազդակի արձագանքն էր դարձեալ Եւրոպայի մէջ հայոց օրդան ունենալը, որուն կը շարունակէ մինչև յարդ նպաստել։

«Մշակը» վերջապէս կրթեց ամբողջ մի նոր և թարմ սերունդ, որ պատրաստ է ազգին ծառայել և ձեր դաղափարների ուղղութեամբ ընթանալ։

Շնորհաւորելով «Մշակի» տասնամեայ յոբելեանը, սրտանց մաղթելով նրան զոյութեան բաղում տասնեակ տարիներ, կը խնդրենք արժանացնել մեր այս նամակիս տեղ տալ նրա էջերի մէջ։

Սատրապրեցին 9 երիտասարդներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հետևեալ նամակը մեզ ուղարկված է տպագրելու համար։ «Յայտնի է որ ամբողջ Ռուսաստանում կան երեք ֆարմացեվտական (դեղագործների) ընկերութիւններ, որոնց նպատակն է որ և է միջոցով օգնել չքաւոր ֆարմացեվտներին։ Մենք, Թիֆլիսի դեղատներում (ապտեկաներում) ծառայող ֆարմացեվտներս, տեսնելով այդ տեսակ ընկերութիւնների արդիւնքները և զգալով նրանց օգուտը, կամենում ենք Թիֆլիսումն էլ հիմնել մի բարեգործական ընկերութիւն, որի նպատակը լինի օգնել կովկասեան բոլոր չքաւոր ֆարմացեվտներին։ Թիֆլիսի մեր ընկերներից մինը առաջարկել է արդէն քաղաքիս դեղատների տէրերին վերոյիշեալ միտքը և նրանք յայտնել են իրանց կողմից համաձայնութիւն, խոստանալով մեզ օգնութիւն։ Այնուհետև պարոնը ուղարկել է նամակներ կովկասեան այլ քաղաքների դեղատների տէրերին, խնդրելով նրանցից էլ օգնութիւն, ընկերութիւնը հիմնելու համար։»

—

ՍՏԱՎՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են։ «Մի ամիս առաջ այստեղի հայ սակաւաթիւ երիտասարդները ժողովեցան մտածելու հայերէն լեզուով մի ներկայացումն տալու մասին, որի արդիւնքը պէտք է յատկացվեր մեր ծխական ուսումնարանին։ Վրձռեցին խաղալ «Սէր և նախապաշարմունք» պիէսան։ Բայց կրկնութեանը չաները չեկան և գործը քանդվեցաւ։»

—

Նոյն տեղից մեզ գրում են որ Վարդանանց տօնը կատարվելու ժամանակ կարդացվեցան Ստավրոպոլի հայոց ծխական դպրոցում մի քանի անհամ ճառեր և ներկայացվեցաւ դպրոցի տարեկան հաշիւը, որից հանդիսականներն իմացան թէ տարվայ ընթացքում 1,200 ռուբլ ծախս է եղել դպրոցի վրա և թէ մի քանի ռուբլ այդ գումարից մնացել է հոգարարձու Գիւլնազարեանի մօտ։ Իսկ թէ ինչ դրութեան մէջ է ուսումնարանը, քանի աշակերտ և աշակերտուհի ունի, ինչ են ուսուցանում,—ներկայ գտնվողները ոչինչ չիմացան։ Ճառերից յետոյ աշակերտները երգեցին մի քանի ազգային երգեր, իսկ դրանից յետոյ եղաւ վիճակախաղ։ Հանդէսը վերջացաւ նախաճաշիկով, որտեղ շատ գինի և արաղ խմեցին հիւրերը և ցրվեցան։

—

ՆՈՒԽՈՒՅ մեզ գրում են։ «Մեր արհեստաւոր դասի մէջ սովորութիւն կայ բարեկենդան օրերը ծաղրական այլ և այլ շորերը հագնել՝ ուղտապանի, զինուորի, պօլիցիականի, և այդ մասկարադի ձևով հագնված անձինք շրջում են փողոցներում, գնալ դուռը, հանդիսականներից փող ժողովելով։ Այս տարի այդ ծաղրածու, բայց ազնիւ պարոնները, ինչ որ փող ժողովեցին այդ միջոցով, դուրս գալով իրանց օտարօրի զարդերի ծախսը, ամբողջութեամբ նուիրեցին տեղիս հայոց դպրոցին։ Այդ գումարը թէև միայն 15 ռուբլ եղաւ, բայց մեր արհեստաւորների արածը այն աստիճան ազնիւ բան էր, որ անկարգրելի տպաւորութիւն գործեց ամբողջ քաղաքում։ Թող այդ չքաւոր ծաղրածուներից օրինակ առնեն Նովսու մեր հարուստները։»

—

Մեզ գրում են ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ, փետրվարի 23-ից որ այդտեղի եղանակը բոլորովին փոխված է, օրերը գարնան օրերին են նմանվում։

—

ՍԱՄԱՂԱՐ գիւղի հայ-աւետարանական հասարակութեան տանուտէր պ. Կիրակոս Ղազարեան գրում է մեզ հետևեալ նամակը։ «Ձեր լրագրի ներկայ թիվ 11 համարի մէջ մի անայտ թղթակից Վաղարշապատից հաստատում է որ մի սամաղարցի հայ-աւետարանական պառաւ կին իրան լէմսա է անուանում, ուրանալով իր հայ լինելը։ Թղթակցի այդ զրպարտութեանը կը պատասխանեմ թէ մի ճշմարիտ հայ-աւետարանական իրեն ամօթ կը համարի լէմսա կամ ուրիշ մի անուն տալ։ Ով գիտէ, գուցէ հայ պառաւ կինը ծիծաղելով է այդպէս պատասխանել, քանի որ ոմանք հայ-լուսաւորչականներից մեզ այնպէս են անուանում, բայց ես սամաղարցի հայ-աւետարականներից մինչև օրս մինն էլ չը տեսայ, որ ուրանար իր հայ ազգութիւնը, չը լսեցի մինի բերանէն անգամ լէմսա բառը։ Ինչքան ստախօս մարդիկ, նախանձից, չարակամութենից, կրքից շարժված խօսքն, գրէն, յարձակվեն մեզ վրա, աշխատեն հեռացնել մեզ ազգութիւնից,—մենք այնուամենայնիւ միշտ ասելու ենք և կասենք որ հայ էինք, հայ ենք և հայ կը մնանք միշտ։ Եւ ոչ միայն հայ, այլ հայասէր և ազգասէր։ Թող այդ մարդիկ այն էլ գիտենան որ մենք քրիստոնէական զգացմունքով միշտ կաղաչենք Արարչին անիրաւաւորութեամբ ներել նրանց, որովհետև իրանք չը գիտեն ինչ են գործում։ Իսկ մեր սիրելի ազգին միշտ կը ցանկանանք բարօրութիւն և երջանկութիւն։»

—

Ստացանք «Հրահանգ տեղական վարչութիւններին և մանուածողովներին» հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում։ Գրքոյկը տպված է հա-

յերէն և ռուսերէն լեզուով, Թիֆլիսում, Յովհ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1882 թվին:

—

«Русскій Курьеръ» լրագիրը իր № 50 մէջ նուիրում է մի ընդարձակ յօդուած «Ապահարզանի հարցին» որի մէջ յայտնում է այն միտքը թէ ամուսնական օրէնքները պէտք է վերաքննվէին և ապահարզանը պէտք է հեշտացվէր, քանի որ կապել արուեստական յաւիտենական կապերով երկու ամուսիններին, եթէ նրանք արդէն միմեանց ատում են, չէ նպաստում ընտանեկան բարոյականութեանը, այլ ընդհակառակն խախտում է այդ բարոյականութիւնը:

—

Վրաց «Գրօէրա» լրագիրը ասել է որ Կովկասեան Գրիկալը պէտք է վերցվի, իսկ Թիֆլիսի նահանգի ազնուականների փոխառութիւնների գործերը պէտք է յանձնվեն Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկին:

—

Օդեսայի լրագիրները հաղորդում են որ այդ քաղաքի ռուս թատրոնական խումբը խնդիրք է ներկայացրել նոր գեներալ-նահանգապետին թոյլ տալ նրանց իրանց ներկայացումները չարունակել մեծ պատիւ: Նահանգապետի պատասխանը դեռ ևս յայտնի չէ:

—

Ռուս լրագիրները հաղորդում են որ Խարկովի համալսարանը կրկին բացված է և դասաւանութիւնը նրա մէջ կրկին չարունակվում է:

—

Մեզ խնդրում են յայտնել որ «Գարդ» ամսագրի առաջին համարը կը հրատարակվի մարտ ամսի վերջերում:

—

Մեծ-Ղարաքլիսից մեզ գրում են որ փետրվարի 6-ից այդտեղ եղանակը բաւական մեղմացել է. և ինչպէս երևում է, գաշտերում երևացող ամբողջ ձիւնը շուտով կը հալվի:

—

ՆՈՒԽՈՒՅՑ մեզ գրում են: «Պ. պ. Ղարիբեանց և Քոչարեանց, որոնք մի քանի տարի ձրիարար հեռագիրներ էին գրում և այլ գրութիւններ կատարում տեղիս վաճառականների համար, որոշել են նոյնը կատարել այսուհետև վարձատրութեամբ և ստացած բոլոր արդիւնքը յատկացնել Նուխու ազգային երկսեռ դպրոցներին: Դրա համար արդէն բացել են երկու արկղ: Ասում են որ 250—300 բուրլ արդիւնք կը լինի տարեկան:»

—

Նոյն տեղից մեզ գրում են որ վերջին ժամանակները Նուխու հայ հասարակութեան մէջ նըշմարելի է լինում մի տեսակ շարժում և ձգտում դէպի ազգային կրթութեան գործը:

—

Հրաւիրում ենք «Արձագանք» շաբաթաթերթի ուշադրութիւնը հետեւեալ երևոյթի վրա: Կ. Պոլսի «Մասիս» լրագիրը իր բազմաթիւ գեղեցիկ յատկութիւնների հետ ունի և մի շատ գովելի յատկութիւն, այն է փոխ առնել լուրերը, տեղեկութիւնները և ամբողջ նամակները, քիչ փոփոխելով նրանց ոճը, ուրիշ լրագիրներից առանց ի տարիէ յիշելու այդ լրագիրների անունները, մանաւանդ որոնց ուղղութիւնը չէ հաւանում: Հասարակ լեզուով այդ տեսակ վարմունք անուանվում է գողութիւն: Եւ ահա «Արձագանքի» խմբագրութիւնը դեռ ծանօթ չը լինելով «Մասիսի» այդ գեղեցիկ յատկութեան հետ և գեկտեմբեր ամսին անցեալ թվի, քանի իր թերթը դեռ չէր հրատարակում, երևի աւելորդ համարելով «Մշակի» յօդուածներին հետևել, այժմ միամտաբար քաղում է Կ. Պոլսում հրատարակվող «Մասիսից» Պարսկաստանի մասին այն լուրը, որ արդէն դեկտեմբերի 30-ին, № 243 մէջ տպված էր Թիֆլիսում հրատարակվող «Մշակի» մէջ, մեր սեփական թղթակից պ. Արմենակի նամակում:

—

ԲԱԳՈՒՅՑ պ. Ս. Թառայանց մեզ գրում է: «Կիրակի, 21-ին փետրվարի, ժամը 3-ին կէսօրից յետոյ, հայերէն լեզուով դասախօսութիւն կար «Մարդասիրական ընկերութեան» դահլիճներից մէնում: Ամբողջ դահլիճը լի էր լսողներով, մուտքը ձրի էր: Դասախօսը ինժեներ պ. Կարապետեանն էր, որ ծառայում է երկաթուղու վրա: Պարոնը նիւթ էր վերցրել ֆիզիկայից «Ցոլութիւնը և օդը:» Դասախօսը իր բոլոր ասածները բացատրում էր օրինակներով, ֆիզիկական մեքենաների վրա փորձեր անելով: Երևի դասախօսութեան ձրի լինելու պատճառով էր, որ մարդիկ շատ էին ժողվել: Բայց նոյն իսկ այդ պատճառով մինչև դասախօսութեան կէսը անդադար նոր եկողներ էին լինում, իսկ յետոյ, մինչև վերջը, անդադար դուրս գնացողներ. այդտեսակ անընդհատ երթևեկութիւն շատ էր խանգարում լսողներին: Սեղանը, որի վրա շարված էին ֆիզիկական մեքենաները, չէր երևում եռեի նստողներին. այս էր պատճառը որ սրանք բոլորն էլ բարձրացել էին իրանց տեղերից ու կանգնել նստարանների վրա. դա մի մեծ անկարգութիւն էր: Հարկաւոր է որ սեղանը, որի վրա դրված են մեքենաները կանգնեցրած լիներ մի փոքրիկ բարձրութեան վրա, որպէս զի բոլորն էլ տեսնէին արած ֆիզիկական փորձերը իրանց նստած տեղից: Վերջացնում եմ մի փոքրիկ նկատողութեամբ. պ. դասախօսը շատ ցած ձայնով է խօսում, այնպէս որ նստողների եռեի կարգերում նրա ձայնը հազիւ լսելի էր լինում: Լաւ կը լիներ եթէ պարոնը մի փոքր բարձր խօսէր:»

—

«Արձագանք» շաբաթաթերթի Երևանի թղթակիցը խօսելով այդ քաղաքում հիմնվող կալուածական բանկի մասին, շատ իրաւացի կերպով իր նամակի վերջում նկատում է թէ. «Անկասկած այդ հիմնարկութիւնը մեծ ազդեցութիւն կունենայ երկրագործութեան զարգացման վրա, բայց միթէ մեր երիտասարդները չեն կարող իրանց այժերով իրագործել այն, ինչ որ այս բօսկիս անհրաժեշտ է մեր երկրի տնտեսական այժերը չը սարկացնելու և մեծամասնութեան օգտութեան հասնելու համար. արդեօք ժամանակ չէ քաղաքներում և մանաւանդ գիւղերում հիմնել «Փոխատու-խնայողական» ընկերութիւններ:»

—

Ինչպէս հաղորդում է «Голосъ» լրագիրը, փետրվարի 21-ին, առաւօտեան 11 ժամին, գեներալ Սկոբելեվ հասաւ Ս. Պետերբուրգ վարչական երկաթուղով: Երկաթուղու կայարանի վրա գեներալին ընդունեց նրա յարգողների մի խումբ, ուղեկցված աղաղակներով: Սկոբելեվ, որ, ինչպէս երևում է, չէր սպասում այդ տեսակ ընդունելութեան, դուրս գալով վագոնից և նստելով կառքի մէջ, աջ ու ձախ գլուխ էր տալիս կայարանում հաւաքված հասարակութեանը:

—

ՉԵԲՐԱՅԻԼԻՑ մեզ գրում են: «Այս կողմերի թուղթերը մնացին նոյն վայրենիներ, ինչ որ էին մի յիսուն տարի պանից առաջ: Նրանք կամ իրանց մէջ են կռւում, միմեանց ջարդում, սպանում, կամ միանալով, աւազակային յարձակումներ են գործում քրիստոնեաների դէմ: Փետրվարի 19-ին չուկայի մէջ երկու թուրք մի փունտ իւղի համար այն աստիճան կռւեցան միմեանց մէջ, որ սկսեցին միմեանց դաշանակներով ջարդել: Զարդողներից մէնը կուփ վերջը ինքն այն աստիճան ջարդվեց որ երկու ժամից աւելի ուշագնացութեան մէջ մնաց և կարելի է ամենեին չապրի էլ: Սրանից երկու օր առաջ էլ երկու թուրք սկսեցին կռւել ընկոյզի կոշկուսի մի հինգ, վեց կոպեկի համար: Անմիջապէս կռւողների երկու կողմը հաւաքվեցան իրաքանչիւրի բարեկամներն ու ազգականները և սկսվեցաւ ընդհանուր կռիւ դաշանակներով և խանչալներով: Ոմանք վիրաւորվեցան, և ջարդվեցան, բայց բաղդաւորապէս սպանվողներ չեղան:»

—

Մեզ գրում են ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԻՑ հետեւեալը. «Զը գիտեմ մեր գիւղի կառավարիչ համարվողները երբ պէտք է վերջ տան մեզ շրջապատող անմաքրութեանը, մինչև երբ թոյլ կը տրվի գեւակի մէջ ապը ածելը, մինչև երբ պէտք է տաւարի ապրից գեղեցած ջուրը խմենք: Գարնանը այդ անմաքրութիւնների հետեւանքը աւելի էլ անտանելի կը լինի: Մթթէ լրագրական խօսքը ոչինչ ներգործութիւն չունի գաղաքլիսեցիների վրա: Հրաւիրում ենք պ. Փիրումեանցի ուշադրութիւնը մեր այդ հակառողջական, անտանելի դրութեան վրա:»

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են: «Վերին-Ագուլիսը, համեմատելով ուրիշ քաղաքների և գիւղերի հետ, պիտի ասած, միշտ հասկրել է «Մշակին:» Շնորհիւ ձեր բազմաչիտաւ լրագրի գործունէութեան, լրագրական խօսքը հասարակութեան մէջ ստացել է նշանակութիւն և ազդեցութիւն: Բայց ամենայն դրով պէտք է իր սուրբ պարտքը հասարի ճշդութեամբ և անաչառութեամբ դիմել լրագրին, մի կողմ թողնելով կիրքը և թշնամութիւնը: «Մշակի» անցեալ տարվայ վերջին համարներում տրվեցան Ագուլիսից մի քանի սխալ տեղեկութիւններ և մեացին առանց պատասխանի: Ամեն մի բարեխիղճ ազուլեցու հարցրէք և նա ձեզ կը պատասխանի որ ուռումնարանի և հողաբարձութեան վրա գրածները անտեղի էին. այս տարի թէ ուսուցիչները և հողաբարձները ջերմեռանդ կերպով կատարել են իրանց պաշտօնը: Ամեն տեղ, մեզանում, յայտնվում են միշտ անձինք, որոնք աշխատում են ձեռնել ընտրված պարտականների գործունէութեանը, չը հասկանալով որ ընտրված անձանց յանձնված գործն էլ իրանց սեփական գործն է: Ուռումնարանի փողերը հաւաքելու համար երկու տարի առաջ պ. Պռօշեանց Ագուլիս գալով, մի քանի սրտայաւ անձինք առաջարկել են իրանց ծառայութիւնը. սկզբից նա էլ ջերմ սրտով սկսեց աշխատել և խոստացաւ հետեւեալ տարին կատարել խոստացածը: Բայց մի քանի հանգամանքներ դարձեալ առաջացրին նրան և գործը մի տարի է որ յետաձգված է: Բարեկենդանի օրերին օրիորդաց ուռումնարանի դահլիճում եղաւ երկսեռ մասնակիների 3-րդ գրականական երեկոյ, որ անցեալ երկու անգամից աւելի աջող և լաւ անցաւ: Ներկայ գտնված հասարակութիւնը շատ գոհ մնաց այդ երեկոյից: Մուտքի համար նշանակված չնչին գումարը կը գործադրվի յօգուտ չքաւոր երեխաների սկսելիքին: Շնորհիւ «Մշակի» աշխատութեան, հայերը առաջվայ պէս անտարբեր չեն դէպի Ցանկասանի իրանց եղբայրների դրութիւնը: Ներսէս պատրիարքի ազդին մատուցած ծառայութիւնները գնահատելով, նորերումս պ. Մ.-ի տունը հաւաքված մի փոքրիկ խումբ սկսեց հանգանակութիւն անել. հաւաքված գումարը, մօտ 150 բուբլ, պիտի ուղարկվի Ներսէս սրբազանին, որ նա կարողանայ այդ փողը իր ցանկութեանը համեմատ: Գանվեցան անձինք որոնք ասեցին թէ նպատակը բարի է, բայց որովհետև պ. Մ.-ի տունն է հանգանակվում գումարը, ուրեմն ևս չեմ մասնակցի այդ ստորագրութեանը: Այո, կան հայերի մէջ այն տեսակ մարդիկ, որոնք անձնականը գերադասում են ընդհանուրից և այս պատճառով շատ գործեր մեզանում դլուխ չեն գալիս և քանդվում են: Բայց այնու ամենայնիւ ստորագրութիւնը չարունակվում է:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Նորերումս անգլիական լորդերի ժողովը վճռեց պարլամենտական քննութիւն նշանակել իրլանդական գործերի վերաբերութեամբ, գրում է „Голосъ“ լրագրի թղթակիցը: Գլադստոն և միւս մինիստրները վճռեցին ընդհատել պարլամենտական գործերի քննութիւնը և առաջարկել համայնքների ժողովին, որ նա պախարակէ լորդերի ժողովի այդպիսի գործունէութիւնը, որպէս զի առաջն առնվի այն վատ ազդեցութեան, որ կարող է գործել իրլանդական ժողովուրդի վրա լորդերի ժողովի այդպիսի վարմունքը: Այդ առաջարկութիւնը, որի նմանը դեռ ևս չէ եղել անգլիական պարլամենտի պատմութեան մէջ, աւելի էլ կը վատացնէ համայնքների և լորդերի ժողովների մեծամասնութիւն կազմող կուսակցութիւնների յարաբերութիւնները: Այսպէս թէ այնպէս դեռ ևս յայտնի չէ, թէ ինչպիսի հետեւանքներ կունենայ այդ առաջարկութիւնը:

Համայնքների ժողովին բոլորովին յայտնի չէր, որ Գլադստոն փետրվարի 20-ին պէտք է մտցներ այդ առաջարկութիւնը լորդերի ժողովին պախարակումն յայտնելու մասին: Այն ձառը, որով Գլադստոն ձեւակերպեց իր առաջարկութիւնը, ամեն կերպ գեղեցիկ կարելի է համարել: Զարմանալի մօտ ծանօթ լինելով առարկայի հետ, Գլադստոն ճարտասանական արհեստով և լոգիկայով ապացուցեց իր առաջարկութեան անհրաժեշտութիւնը: Գլադստոնի արտասանած ձառերի լսելը մեծ բաւականութիւն է պատճառում: Այս անգամ Գլադստոնի ձառը մեծ ազդեցութիւն գործեց: Օրինակ, խօսելով իր վախճանի մասին, երևելի ճառախօսը ասաց. „Ես աւելի ապրում եմ անցեալի յիշատակներով, քան թէ մոտածելով ապագայի մասին: Այնու ամենայնիւ պետական իմ գործունէութեան վախճանին ցաւալի կը լիներ ինձ տեսնել, որ համայնքների ժողովը անկարող է կատարել իր պարտականութիւնները: Միթէ ցաւալի չէ տեսնել մի ազնիւ կենդանի, որ կապանքներով է կապված և անկարող է ազատութեամբ շարժել իր անդամները և որ մինչև անգամ չէ փորձում քանդել այդ կապանքները և վերադարձնել իր կորցրած ազատութիւնը: Ես հաւատացած եմ, շարունակեց Գլադստոն, որ համայնքների ժողովը մշտապէս ըստ արժանւոյն կը գնահատէ խօսքի ազատութիւնը և կը պաշտպանէ նրան իբրև սրբութիւն: Ցարդելով խօսքի ազատութիւնը համայնքների ժողովը համբերութեամբ կը տանի, երբ խօսքի ազատութիւնը 'ի չարն են գործ դնում և նրա դիմակով են ծածկվում: Այնու ամենայնիւ զրքան էլ մեծ լինի սկզբունքով խելացի այդ համբերողութիւնը, համայնքների ժողովը թոյլ չի տայ նրան այնպիսի չափեր ընդունել որ ինքը անկարող լինի կատարել իր օրէնսդրական պարտականութիւնները: Ես իրաւունք կունենամ ինձ անընդունակ համարել, եթէ չեմ կարողանայ համոզել համայնքների ժողովին, որ անհրաժեշտ է եռանդոտ վճիռ կայացնել և նրան համապատասխան օրէնսդրական մի այնպիսի միջոց դարձնել, որ կարողանայ առաջն առնել չար նպատակներով յարուցած դժուարութիւնների պարլամենտական գործերի կանոնաւոր ընթացքին արգելքներ դնելու համար: Ես հաւատացած եմ, որ համայնքների ժողովը կը կարողանայ կատարել այն մեծ և ազնիւ պարտականութիւնը, որ ազգը նրա վրա դրել է:“ Այդ ճառը ծափահարութիւններով ընդունեցին թէ կառավարական և թէ ընդդիմադրական կուսակցութիւնները:

Դուբլինից փետրվարի 25-ից հեռագրում են. Լէյստերի կոմսութեան մէջ այսօր կայանաւորվեցին լրագրի մի խմբագիր և հեռագրական երկու ծառայողներ, որոնք դրդում էին ֆերմերներին չը վճարել կալուածատէրերին նրանց հասանելի կալուածական տուրքը: Մի ֆերմեր, Ֆրիկլի անունով, որ վճարեց կալուածական տուրքը, ենթարկվեցաւ մարդասպանների յարձակմանը: Ինքը Ֆրիկլի կարողացաւ փախչել և ազատվել, բայց նրա որդուն հանեցին մահճից և սպանեցին տան դռների մօտ: Նորերումս Բալիկուրի պահեստից զէնքեր և դինամիտ յափշտակեցին: Զը նայելով պոլիցիայի բոլոր աշխատանքներին, յափշտակողները և յափշտակված առարկաները մինչև այժմ գտնված չեն:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 10 փետրվարի 1882

Կ. Պոլսոյ քանի մը հայ լրագրաց յարձակումները «Journal d'Orient»-ի դէմ վատ տպաւորութիւն ըրին քաղաքիս հայ հասարակութեան վրայ: Մենք գիտենք թէ այդ լրագրաց շատերը ուրիշ փառասիրութիւն չունին՝ եթէ ոչ հաճելի անցնիլ Բ. Դրան: Մենք գիտենք նաև որ այդ լրագիրները այնքան քաջասիրա են որ խոհեմութիւն կը համարին պահել իրենց լուսանքները այնպիսի լրագրի մը համար, որու թիւրքիա մտնելը արգիլուած ըլլայ:

Յայտնի բան է որ եթէ «Journal d'Orient» պարզապէս զրաղէր հայոց խնդրովն առանց որ և է փոխարինութիւն խնդրելու՝ բնաւ հայ լրագրաց չարամիտ քննադատութեանց ենթակայ չը պիտի ըլլար և անոր խմբագրապետին սխալ ազգասիրութիւն մը վերագրելով այդ իրրև յանցանք չը պիտի նկատուէր իրեն այնպիսի անձերու կողմանէ՝

ողք փաստաբանի մը արժանիքը իր դատաւորնեն դատելու չափ յիմար են: «Մասիս» և իր նըմանները եկեր են այսօր ազգին գրպանէն եւած 1000 (?) ոսկւոյ գումարը մեղքնալու, առարկելով որ այդ լրագիրը ոչ միայն օգուտ մը չի բերեր մեր դատին, այլ և, հարուածելով միանգամայն Թուրք նախարարները և անոնց դժգոհութիւն պատճառելով, վնաս անգամ կարող է հասցնել մեզի: Ինչ փառաւոր առիթ «Մշակի» վրայ յարձակելու համար, ըսելով թէ «եթէ «Մշակը» չըլլար՝ այսպիսի ահագին գումար մը ազգին գրպանէն չէր ելներ:»

Մեր ազգային լրագրութեան մէջ սովորած ենք ամեն օր անճառնի և նենգաւոր պատճառաբանութիւններ կարդալ. բայց պէտք է խոստովանիլ որ այս վերջինը իր տեսակի մէջ մէկ հատիկ է:

Անօգուտ է կրկնել թէ հայոց խնդիրը եթէ պահ մը դադրի միջազգային խնդիր մը ըլլալէ, նա ոչ ևս խնդիր մ'է մեզ համար. նա չեղեալ, չի յարուցուած հարց մ'է, լոկ թուրքին յօժարակամութենէն, հաճոյքէն կախուած. ըսել է անդարձադրելի, անիրականալի խնդիր մը: Այս ամն ասոիճան բացարձակ ճշմարտութիւն մ'է այսօր՝ որ գրեթէ պարտն Տրլա Պալիսի առաձնեռուն կարդը կարող է դասուիլ: Հարկ է ուրեմն որ այդ հարցը լուծելու պէտքը,—պարտաւորութիւնը պիտի ընկնիք—յիշեցնենք մենք անդադար որու որ անկ է, պարզելով օտարաց առաջ մեր կացութիւնն, մեր դատանքն և մեր պահանջները: Այս անհրաժեշտ յայտարարութիւնները երկու պայմանի ներքև միայն կարող են ազդու ըլլալ: Նախ որ ազատօրէն գրուած ըլլան, և երկրորդ որ միջազգային լեզուով մը բացատրուին, քանի որ հարցն ալ միջազգային է: Զորս տարիէ ի վեր տեսանք որ ասոիճան եւրոպական լրագրութիւնը կարեւորութիւն տուաւ մեր խնդրոյն. և եթէ մէկ կողմ դնենք խիստ փոքրաթիւ և անգոյն յօդուածները որք եւրոպական մեծ թերթերը հիւրընկալեցին աւելի խաթեր համար քան թէ խորին համոզմամբ և հարցը սրտի առնելով, ինչպէս կըսեն, կը տեսնենք որ Արեւմտեան մամուլը այնքան կարեւորութիւն տուած է 61-դ յօդուածին, որքան Կ. Պոլսոյ ժողովուրդը Հիւսիսային բեւեռի անցքի խնդրոյն:

Այս հանգամանաց մէջ ահա Եւրոպայի ճիշդ կենտրոնը, Ֆրանսերէն լեզուաւ, թերթ մը կը գտնուի որ յանձնառու կըլլայ զրաղիլ նաև շարունակ հայոց խնդրովը,—վասն զի սիրալ է ըսել թէ «Journal d'Orient» լոկ հայոց օրգանն ինքզինք հռչակած է, նա բոլոր արեւելեան ազգայնութեանց, ընդհանուր ժողովրդոց դատ է որ կը պաշտպանէ:— Սա իր ամեն մէկ համարներու մէջ մանրամասն և ճշգրիտ տեղեկութիւններ կուտայ խնդրոյն կացութեանը վրայ, կարձանագրէ, աշխարհավարութեան գործածած բարբառովը, հայոց դէմ գործուած նորանոր վնասմունքները, կը պատմէ, ամենամոռնալի ազրիւրներէ քաղուած վերջին հարատահարութիւնները, կը ճառէ հայոց անցեալի վրայ, ներկայ վիճակի մասին և կը թռէ մի առ մի մեր ամեն բարեմասնութիւնները: Այդ լրագիրը կը սնդէ սատակութեամբ թէ պէտք չէ բնաւ հաւատք ընծայել թիւրքայ խոստումներուն, թէ բարենորոգումնք անկարելի են ձեռք բերուիլ առանց օտարի ճնշման, և նոյն միջոցին կը զգուշացնէ հայ թերթեր որք կը հալածեն այդ թերթը, կը քննադատեն անոր ուղղութիւնը, անոր խմբագիրը կը թշնամանեն, անոր ազգութիւնը կամաւ կը փոխեն, ինչպէս. վասն զի մի և նոյն ատեն այդ լրագիրը սատակապէս կը հարուածէ տեղական թիւրք պաշտօնեաներն որք ամեն հնարք ի գործ կը դնեն հայոց ազգը բնաջինջ ընելու համար: Եւ կը գտնուին անխիղճ և չոգմոգ հայ խմբագիրներ որք զայթակղութիւն կը զգան տեսնելով որ հայութեան փոքր փորոտ թուրք պաշտօնեաներց նենգութիւնները մէկ օտարը երևան կը հանէ և կուզեն մեզ հաւատացնել թէ անոնց թշնամութիւնը առաւել կը զրգռի այսպէսով:

«Journal d'Orient» դեռ նոր է, հազիւ մէկ տարի կայ որ նա մեր խնդրովը կը զբաղի. դեռ վեց ամիս չի կայ որ թուրք պաշտօնեաներուն արարքներն երևան կը հանէ. ինչպէս եղեր է ուրեմն որ թիւրքիոյ հայերն իրենց օրգաններու ձեռամբ հաւատարմական, ստրկային ջերմ ցոյցեր ընելով չեն կարողացեր որ և է բարիք ստանալ նրանցմէ, և ընդհակառակը օր քան զօր վատթարացեր է հայոց, նոյն իսկ Կ. Պոլսոյ հայոց վիճակը: Շատ ու շատ կրկնեցին «թէ հայերն ուրիշ շահ. ուրիշ ամենչնչաք չունին եթէ ոչ մնալ, մինչև ի կատարած աշխարհի, իրը անբաժանելի մասն այդ մեծաղօր տէրութեան»: Բալոր այս և ասոնց նման խօսքերն կարողացան խափանել թուրքն իր յատակագծէն և ինչ ամամութեամբ կելնեն այսօր մեր վրայ հասած ամեն պատուհասները սատականալուն պատճառ կը բռնեն Վիեննայի մէջ տպուած լրագրի մը յօդուածները: Մինթ թիւրքիոյ հայոց վիճակն վատթարութեան յետին սահմանն հասած չէ շատ տարիներէ ի վեր, և կարելի բան է արդեօք որ առաւել ևս վատթարանայ:

Եթէ այդ լրագիրն կարեւորութիւն չունի բնաւ, եթէ սա աննշան թերթիկ մ'է, ինչպէս կը հաճի ըսել «Մասիս», իրը թէ ինքը լրագրութեան մէջ «Daily News»-ի հաւասարն ըլլար, ինչպէս արեւմն նա այդքան ազդու կը լինի մեզի վնաս հասցնելու մասին, և բոլորովին անկարող՝ երբ մեր դատին նպաստել հարկ կըլլայ: Եթէ «Journal d'Orient» այդքան կարեւորութիւն չունէր, ինչպէս արեւմն նոյնպէս հարկ կըլլայ: Եթէ «Journal d'Orient» այդքան կարեւորութիւն չունէր, ինչպէս արեւելեցին, ինչպէս արեւելեցին «Times», «Debats», «Gaulois» և այլն, և ճիշտ այն ժամանակ որ տակաւին յիշեալ լրագիրն կը խնայէր թուրք պաշտօնեայներն:

Եթէ Ֆրանսերէն աւելի մեծ օրգանի մը չունենք մեր շահերուն նուիրված, ուստի է յանցանքը. «Մշակին» թէ թրքահայոց անտարբերութեան: Եթէ կ. պոլսեցի ժլատ և անզգայ հասարակութիւնը, կամ լաւ ևս լրագրագետները, յիրաւի իրենց անարժան և անբաւական կը գտնեն Վիեննայի օրգան, ոչ աք գիրենք կարդալ, որ ստորագրութիւն մ'ալ իրենց մէջ բանան «Times»-ը հայոց օրգան դարձնելու համար: Մենք վստահ ենք որ մէկ ամսուան միջոցի մէջ գոնէ 74 գրուչ կը հաւաքուի, ազգային երեսփոխանաց լսման ալ միասին հաշուելով: Կ. պոլսեցի հայը սակէ աւելի բնելու հարկը չի տեսներ իր շահերը պաշտպանելու համար: Նա աւելի ամուն կերպով պիտի իր հայրենեաց փրկութեանը նպաստեր: Նա մի օր կը ժողովուի դաշտի մը մէջ և «Արիք հայկազունքը» կերգէ, լմնցաւ գնաց: Ինչ հարկ կայ ձեռքը պրպտելն ասոնք:

Եւ տեսնք ինչ մեծ զոհողութիւն է Ֆրանսերէն հայոց օրգան մը ունենալու համար: 1000 ոսկի, 22,750 ֆրանկ: Ինչ շատայլութիւն: Մինչդեռ այդ գումարով կարելի կըլլար շատ հայ լրագրաց բաւական խնամք հայթայթել բանի մը տարուան համար: Մեզք հազար:

Թող Կ. Պոլսոյ լրագրագետք չի կարծեն թէ մեր ուսումնական եղբայրները կը սակարկեն իրենց նուէրները մեզի պէս, երբ մեռնէն կամ հեռուէն ազգին լաւութիւն մը կը նշմարեն, այդ լաւութիւնը որքան փոքր ալ ըլլայ: Վազը եթէ ուրիշ ձեռնարկութիւն մը երևան գայ ազգին ընդհանրութեանը օգտակար, այդ ազնիւ անձինքը նոյնչափ առատաձեռն պիտի գտնուին, և դարձեալ «Մշակը» պիտի ըլլայ ամենուն ուշադրութիւնը հրաւիրող: Միւս հայ լրագրաց ծանր է անչափ խոստովանել որքան ժողովրդական է «Մշակ»-ը և որչափ անոր խմբագրատեսը ընդհանուր ազգին վստահութիւնը կը վայելէ: Անոնք ինչ պատճառներ որ կուզեն՝ թող յառաջ բերեն, ամեն հանգամանութեանց մէջ «Մշակի» յաջողութիւնը բացատրելու համար: Թող ոչ որ չի նեղանայ, սա մի համակրութեան և վստահութեան խնդիր է....

Բայց, կըսեն, յայտնի չահուած լրագիր մը չէ կարող օտարաց առաջ ազդեցութիւն ունենալ, հետևաբար քանի որ «Journal d'Orient» հայերէն օգնութիւն կը գտնէ՝ անոր ձայնն ալ լսելի չըլլար: Ինչ տարօրինակ պահանջում է այս, երբեմ ոպասել որ ի սէր մարդկութեան օտարազգի լրագրատեսք զրաղին այնպիսի հարցով մը որ վերջապէս իրենց շահերուն հետ անմիջական յարաբերութիւն մը չունի, և եթէ կայ այդպիսի անձնուէր խմբագրութիւն մը, թող ցոյց տան մեզի: «Justice»-ը թերևս, որ ամենեն ազատատեսակ օրգանն հռչակելով ինքզինքը, հայոց խնդրոյն վրայ երբեմն խօսելու համար միայն, տակաւին սակարկութեան մէջ է Փարիզի քանի մը ազգատասերաց հետ: Կ. Պոլսոյ հայ լրագրատեսք ամենեն աւելի դիտենալու են սակայն որ առանց փողի ոչինչ կարելի է: «Ցուք և տայի ձեզ» կըսէ մեր թագի վարդապետը, և յիրաւի բաւական պարզամտութիւն է կարծել որ եօթն օտարը յօժարակամ, ձրիապէս, զրաղեն անդամ տուժելով, պիտի ելնէ մեր դատը պաշտպանել, հրապարակ հանէ մեզի դէմ գործուած մեքենայութիւնները, լոկ մեզի հաճոյք ընելու, լոկ մեր գեղեցիկ աչքերուն համար:

Բարիզի «Temps» լրագիրը իր յունվար 27-ի թուին մէջ կարեւոր խմբագրական մի յօդուած հրատարակած է, որոյ հետեւեալ հատուածը արժան կը համարենք թարգմանելով հաղորդել «Մշակի» ընթերցողաց: Խմբագիրը անդրդիական խորհրդարանի և պ. Կլեմանսոյի վարչութեան վրայ խօսելով կըսէ.

«Ստոյգ է թէ պ. Կլեմանսոյի յատակագիծը ամբողջապէս գործադրուած չէ դեռ արեւելեան խնդրոյն նկատմամբ. սակայն անոր ամենէն աւելի կենսական մասը կարգադրուած է այժմ: Մոնթենեգրո և Յունաստան տիրացան իրենց նոր սահմաններուն, և դեռ անլոյծ խնդիրները, այսինքն Թիւրքիոյ և մասնաւորապէս Հայաստանի մէջ ներմուծուելիք վարչական բարենորոգումները, սոփոզական նկարագիր մը (caractere) չունին: Այդ խնդրին մէջ չը կան հակառակորդ իրաւութիւններ զորս հարկ լինի հաշտեցուցնել, լոկ հարստահարեալներ կան զորս պէտք է պաշտպանել բռնութեան և կեղեքմանց դէմ: Աշխարհ այնպէս կազմուած է որ մարդասիրական պահանջումները չանուս պահանջումներէն նուազ սոփոզական նկատուած են մինչև:»

Նոյն թերթը իր յունվար 20-ի խմբագրական յօդուածին մէջ Թրքական վարչութեան դէմ խօսելով հետևեալ հատուածը հրատարակած էր:

«Ինչ սկզբունքով թուրք կառավարութեան Եւրոպայի մէջ ունեցած երկիրներուն երկու երրորդ մասը հեռդնեալ խլուեցաւ իրմէ: Վասն զի անկարող էր զայնս կառավարել: Ինչու համար վերջերս իր պատութենէն մեծ կտոր մը անջատեցին և Յունաստանի պարգևեցին զայն: Վասն զի Յունաստան Բարձրագոյն Դուռնէն աւելի ձեռնհաս դատուած է տեղական ժողովուրդները երջանկացնելու համար: Եւ այսպէս պիտի լինի մինչև վերջը, այսինքն ցորչափ թուրք կառավարութիւնը չարտնակէ ինքզինք զուրս հանել արդի քաղաքակրթութեան սահմաններէ: Այժմ՝ բարեկարգութիւններ պիտի խնդրուին իրմէ Հայաստանի համար. չը պիտի կատարէ զայնս, զի չի կրնար ոչ բարեկարգել և ոչ բարեկարգուիլ, և պիտի կարմրցնէ Հայաստանը: Սակայն պարտաւոր էր ըմբռնել ասա կետը թէ՝ Եւրոպայի մէջ իր տիրապետութիւնը մէկ պայմանով միայն կարելի է, այն է հաճելի լինելով: Եւ թող չերևակայէ թէ Եւրոպա տրամադիր է Աֆրիկէի ծովերը իրեն թողալ իրը փոխարինութիւն: Աֆրիկէի ծովերը զարձեալ Եւրոպա կը նշանակէ այժմ, և Եւրոպա այն հողը ուր ոտք կոխած է՝ նա չը տար երբէք բռնատրոց և բարբարոսաց:»

Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սանկտպետերբուրգում հրատարակվող «Union» լրագիրը յայտնում է, որ նրա դէմ հարուածանք են սկսել իշխան Բիսմարկին վիրաւորելու համար մեկ յօդուածի մէջ, որ տպված էր այդ լրագրում անցած յունվարի 26-ին:

—Բէլգրադում, ոչ հեռու. Կօրվնցից, անկարգութիւններ պատահեցան մեկ բաղաքական ելոյթի թաղման պատճառով: Թաղումը պէտք է փետրվարի 21-ին լինէր, բայց տեղական կրթօջախների յայտնի ընդդիմադրութեան պատճառով, թաղումը տեղափոխեցան յետաձգել և Կօրվնցից մեկ գունդ զօրք բերել տային: «Post» լրագրի ստացած հեռագրի խօսքերին նայելով, Բէլգրադի կաթոլիկ ազգաբնակութիւնը հակառակվեց այն բանին, որ թաղման ժամանակ զանգակներ չածեն, և ահա այդ բանը պատճառ տուեց բաղաքականներին յուզվել և անկարգութիւններ բարձրացնել:

—Փետրվարի 23-ին, աւստրօ-ունգարական բէյլեարատը նորոգեց իր նիստերը: Առաջին հերթական հարցը վերաբերում էր Գալմացիայի մի քանի շրջանների զինուորական դատարաններ մտցնելուն: Գալմացիայի պատգամաւորներից մեկը, պ. Մոնտի, կառավարութեան կողմից առաջարկած այդ միջոցը անօգուտ էր համարում և ասում էր, որ դա միայն անհանգստութիւն կարող է պատճառել ազգաբնակութեանը: Այդպիսի բացառական օրէնքների ժամանակ ամենախաղաղասէր մարդ անգամ իրան ապահով չէ կարող զգալ անհիմն զրպարտութիւնների և մեղադրանքների դէմ: Այդպիսի միջոցը չատ խիստ կը լինէր մինչև անգամ Բօկի-Կոտորեան ազգաբնակութեան համար: Զարութեան արմատը պէտք է որոնել աւտրիական զօրքերով գրաւված թիւրքայ գաւառների մէջ: Կառավարութիւնը յայտնեց, որ առաջարկած միջոցը անպայման անհրաժեշտ է համարում: Օրէնքը ընդունվեցաւ 262 ձայների բազմութեամբ 6-ի դէմ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին ժողովրդական միօրագրութիւնից յայտնվեցաւ, որ Ֆրանսիայում 1,200 բուռն գրող կանայք են գտնվում, 400 արտասահմանեան բէլէտրիստիական հեղինակութիւնների թարգմանչուհիներ, 300 տիկիններ, որոնք բանաստեղծութիւններ են գրում և 100 ժուրնալիստ կանայք:

* * *

Փարիզում, փետրվարի 26-ին, Վիկտոր-Հիւգոյի ծննդեան ութսունամեայ տարեդարձը տօնելու առիթով «Ֆրանսիական թատրոնում» տրվեցաւ առաւօտեան ձրի ներկայացում: Ցուցին «Հէրնանի» պիէսան: Զառամեալ բանաստեղծը երբ թատրոնում երևեցաւ, հասարակութիւնը ադմկալի ցոյցեր արաւ նրան: Բեմի վրա բանաստեղծի կիսարձանը պսակադրեցին, որից յետոյ կարդացվեցաւ Ֆրանսուա Կոպպէի այդ հանդիսի առիթով գրած բանաստեղծութիւնը: Բոլոր մնացած դրամատիկական թատրոններում նոյնպիսի հանդէսներ էին կատարվում: Նախագահ Գրէվի այցելեց հռչակաւոր բանաստեղծին և ցնորհաւորեց նրա ութսունամեայ յոբելեանը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի: Նօվօ-չերկասկի մէջ այրվեցան 42 խանութներ: Ապրանքները ապահովված չեն, վնասները մեծ են: Հարց է բարձրացրած 1879 թուականի սեպտեմբերի 26-ի որոշման մասին հաշտարար դատաւորներին նահանգապետներից վկայական տալու վերաբերութեամբ: Ընդհանուր ժողովրդագրութիւնը պատրաստվում է 1883 թուականի համար: Ժողովրդագրութիւնը կը կատարվի քաղաքների ժողովրդագրութիւնից և լաւ նախապատրաստվելուց յետոյ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. Եկատերինոսլավի նահանգապետ, ազնիւ սօվեանիկ Դուբնօվօ ներքին գործերի մինիստրի օգնական է նշանակված: Լրագիրները փետրվարի 27-ից հաղորդում են. նոր տարիքը շուտով կը ներկայացվի Պետական խորհրդի քննութեան և կը գործադրվի երևի յուլիսի 1-ից: Մշակվում է մի նախագիծ զեմստվօների մէջ ծառայողների համար ինայողական կասսա կազմելու համար: Զեմստվայ ցանքսերը հարաւում աւելի լաւ յայտնվեցան, քան թէ սպասում էին: Լաւ հունձի յոյսեր կան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Կրիվշի հնազանդութիւն յայտնեց: Ռուսաց հաւատարմատարին Բելգրադի մէջ դեսպանի կոչում է յատկացվում: Իշխան Միլանի թագադրութիւնը մայիսի 15-ին է նշանակված: Ցոյս կայ, որ վարչական ազատութիւնների գործերը քննող խորհրդի աշխատանքները կը վերջանան մինչև մայիսի 1-ը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր., 25 կ., երկրորդ 91 ր. 5 կ., երրորդ 91 ր. 50½ կ., չորրորդ 91 ր. 5 կ., հինգերորդ 90 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 216 ր. 75½ կ., երկրորդ 214 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 87 կ., երկրորդ 90 ր. երրորդ 90ր., 12 կ., ոսկի 8 ր. 15 կ: Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 24,19 պէնս, Ամստերդամի վրա 123 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 254 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ՉԱՏԻԿ գլխարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 կ., բրիւկներ 4 ր., բիջամներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., դրապ, մահուդ, տրիկո, սրբիչներ և պրօմներ կէս գնով։ Հնդկական բրինձ 6 կ., սագօ և պերլօվայա կրուպա 9 կ., պանիր չեխաեր 70 կ., նշչատայ կօլմանի 18 կ. ֆունտը, լուծողական ձեթի պիլիւլներ 2 կ., լուացքի փոշի 5 կ.։ **ՆՈՐՈՒԹԻՒՆ**։ Մեղրամոմ և արծաթէ մոմեր 35 և 42 կ. ֆունտը։ Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երեւանների համար 4 ր., մեծերի համար 12 ռուբլուց։ **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**։

22—36

ՄԻ ՊԱՏՈՒԱՒՈՐ ԿԻՆ աշխատանք է ընդունում իր տանը։ Կարում է կանանց **ՀԱԳՈՒՍՏՆԵՐ** 2 մինչև 4 ր.։ Հասցէն. Փօստային վարչութիւն, հարցնել տիկին **ԲԷԶՐՈՒԿՕՎԻՆ**։

1—1

ՓՈԽԱԴԱՐՁ ԿՐԵԴԻՏԻ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ։ Ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի յայտնել ընկերութեան պ. պ. անդամներին, որ տարեկան **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ** նշանակվում է ներկայ տարվայ **ՄԱՐՏԻ** 14-ին։ Ժողովի տեղի և ժամի մասին առանձին կը յայտնվի։

1—2

ԵՒԳԵՆԻԻ ԲԵՐՆԵԿՍ Վօրոնցովսկայա փողոց № 46, սեփական տուն, **Թիֆլիսում**։ Հիւանդային և ներկարարական **ԳՈՐԾԱՐԱՆ** և **ՊԱՀԵՍՏ** աբջյների, մարմարից և չուգունից շինված առարկաների։

1—5 (1)

Որպէս զի առաջն առնենք այն կեղծումների, որ անում են մետաղներ սրբելու մեր պօմադի հետ UNIVERSAL-METAll-PUTZ-POMAD անունով, որ իր լաւ յատկութիւններով ամբողջ աշխարհին յայտնի է, մենք անհրաժեշտ համարեցինք Ռուսաստանի հարաւի, Ղրիմի և Կովկասի համար իւրաքանչիւր արկղի վրա բացի մեր անունից տալ և այնտեղի մեր միակ գործակատարների անունները.

ԵՂ. ՊԵՏՐՕՎԻՆՕ ՕԴԷՍՍԱՅՈՒՄ, որոնց յանձնել են կեղծումները հալածել օրէնքների ամենայն խստութեամբ։ Բերլինի գործարանատէրեր **Ադալբերտ Ֆօգտ** և ընկ. Adalbert Vogt et. C-o

1—3

Լոյս տեսաւ ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ IV և V գրքոյկը. „Երկու վէպիկ“ Անդերսենից. „Սոխակ“ և „Խոզաբած“, գին. 20 կ., առ այժմ գիմել՝ Тифлисъ. Ред. „Мегу“ Тиграну Назарьянцъ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Նոր ստացվեցաւ Ամերիկայից **ПАТАУКЪ** որն ուրիշ տեղ ծախվում է հատը մէկ ռուբլով, իսկ մեզ մօտ 40 կօպէկ է։ Արծրունու գալլերէում։

3—10

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԽՄԻՉՔՆԵՐԻ առևտուրը դադարեցնելու պատճառով առաջին տեսակի **ԿՕՆԵԱԿԸ** վաճառվում է 1 ր. 10 կ. շիշը, **ՊՕՐՏ-ՎԻՅՆ** և **ԽԵՐԵՍ** 1 ր. շիշը։ **ԼՕՆԴՕՆԻ** խանութում **ԱՌԵՒՏՐԱԿԱՆ** բանկի տակ։

5—10

Ե. Օ. ՓԱՐՈՒԽԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍԵՑԻ ՔԱՂԱՔԱՑԻ

Պատիւ ունեմ յայտնել Թիֆլիսի և օտար քաղաքացի պ. պ. վաճառականներին որ բաց եմ արել նոր ԱԳԵՆՏՍՏՎՕ և ԿՕՄԻՍԻՕՆՆԻ ՏՈՒՆ Լօդզայում։ Կատարում եմ ամեն տեսակ պատուէրներ, այսինքն մանուֆակտուրնի, գալանտերէյնի և մահուդի ապրանքներ ուղարկել։ Յոյս ունեմ որ պ. պ. վաճառականները իմ առաջարկութիւնը անուշադիր չեն թողնի և լիովին բաւական կը մնան իրանց պատուէրներով, որ խոստանում եմ անմիջապէս և ճշգրութեամբ։ Իմ հասցէս. ЛОДЗЬ, Цегельняная улица, д. Майшапа № 272 Е. О. ПАРУХОВУ.

1—3

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ծրծոզներ 1 ր., ծալվող ութոռներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պատեղա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բամպէյ 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 ֆունտ թէյ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.։ Երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։

93—100

ՎԻԼՆՆԱՑԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկայ փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

148—150

Միջի փողոց, կաթոլիկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԼՆՆԱՑԻ ՄԵԲԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամպաներ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաներ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ ամալով ամաններ. սումիվալնիկներ մրամօրներ 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ըէվոլվերի, սիգար Ռէնդարդի ֆարբիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և դաֆկ) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէյսոնի. Պետերբուրդու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ զինէվամաստներին հանքային և դարեջրի (для зельтерскихъ водъ и пиво) զուլթուկ (пухъ), պադնոսներ սամովարի և չայու դանակ չանդալ զանազան ֆարբիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ութոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, Ջազացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրանմալ կտրօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի գակոյ, թուղթ փաշի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեատախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիէներ, գդալներ սեղանի և չայու ֆիրաժէ, վարշավի և բրիտանսկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուռուչկէք 45 կ.—5 ր., շամպաներ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլստապոչկաններ վարշավու, ՌԵՁԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շերմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ չոմկաներ գլխի շորի սապոգի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆեկչատակէք մարդկերանց և կանանց պորտմաներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գորանտերեէնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավետ ջրեր պուդրի գլիցերին ջրի քացախ, հոտավետ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և գինիմով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտ պատրաստ գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում։ (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկից փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

2—180

Միջի փողոց, կաթոլիկայա փողոցի անկիւն № 13.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՄԱՐՏԻ

Պալատական սարիա Նասրին Մեծութեան Նասրէդ-Դին պարսից Շահի ՐՕԲԵՐՏ ԷՆՆՑ աշակերտ և աղղական Նը-շանատոր պարսիկ կախարդի, Մահօմեդ Իսմայիլ Բէյի պատիւ կունենայ տալ երեքշաբթի օր, մարտի 2-ին, Արծրունու թատրոնում մի մեծ կախարդական ներկայացումն, ՆՈՐ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ։

Մանրամասները աֆիշներում։ 5.

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՆՈՒԽԻՈՒՄ

ETABLISSEMENT SERICICOLE DE NOUKA

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԵՐ

Գեղին բօժօժների ֆրանսիայից և իտալիայից, արդիւնաբերված **ՊԱՍՏԵՕՐԻ** սիստէմայով։

Ծախում է արդիւնաբերող **ԼԷՐԻՍԼԷ** մի զոլօտնիկ 50 կօպէկ, մի ֆունտը 48 ռուբլ։

ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախվում է Պ. ԱԼԲԵՐՏԻ մագազինում, Գօլօվինսկի պրոսպեկտի վրա, տուն Կօստանդին Զուբալովի։

ՆՈՒԽԻՈՒՄ պ. ԼԷՐԻՍԼԷի հիմնարկութեան մէջ։

9—10

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կօպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Մի և նոյն տեղը **ԹԻՆԱՑԻ ԻԻՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխաչափ դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

86—100

Дозволено цензурою, Тифлисъ, 1 Марта 1882 года.

Типографія Главн. Упр. Намѣст. Кавказ. Лорисъ-Меликовская улица, каз. домъ.